ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԱՑԵԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԱՂԱՓԱՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ / ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆԱՍ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵՋ

Միրումյան Ռիմա
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի առաջատար
գիտաշխատող

Մինաս Տեր-Մինասյան (07.05.1882 թ., Ախալքալաք - 27.11.1951 թ., Փարիզ) - հայ քաղաքական մտածող, քաղաքական և պետական գործիչ, «Դաշնակցություն» հեղափոխական միության գաղափարախոս, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համակարգող, հայկական նոր պետականության հիմնադիր, Հայաստանի Առաջին հանրապետության Բյուրո-կառավարության անդամ, պաշտպանության և արտաքին գործոց նախարար:

Հայ հոգևոր պատմության մեջ Տեր-Մինասյանը (հեղափոխական մականունը Ռուբեն) գրանցվել է նախ և առաջ որպես հուշավիպագիր[1]: Իր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» բազմահատոր աշխատության մեջ, որը ժամանակիցները բնութագրել են որպես հայ ազգային հեղափոխության և Հայաստանի ազատագրության Աստվածաշունչ, բնութագրելի է որպես անդրադարձ հայ հոգևոր մշակույթի և քաղաքական պրակտիկայի նկատմամբ, հայ ազգի ինքնագիտակցության արտացոլում, այն է՝ սեփական ներքին, հոգևոր ներունակության ըմբռնում: Պատմական և արդի Հայաստանի մտածողի ստեղծած նկարագիրը, որը բովանդակում է Հայաստանի պատմության և մշակույթի հոգևոր հիմքերի՝ հայ ազգի գոյության բացարձակ իմաստի ըմբռնումը, ընկակելի է որպես XXդ. առաջին կեսի հայ պատմափիլի-

1. Տե՛ս **L. Շիրինյան,** Ռուբեն. Հայաստանի վերակազմության ռազմավարությունը / Լևոն Ղ. Շիրինյան, Հայաստանը իրավաքաղաքական իրողությունների չափումներում (XX-XXI դդ.), Երևան, 2020, էջ 229:

սոփայական գիտակցության դրսևորում[2]: Մտածողի պատմափիլիսոփայական աշխարհայացքը համահարաբերական է դեռևս հայ դիցաբանական մտածողության մեջ սկիզբ առած հայերի՝ իրենց ինքնատիպության ըմբռնմանը և հայերին ներհատուկ ազատասիրության և արժանի գոյության գրավականի՝ անկախության ձգտման գաղափարներին, որոնք, կազմելով հայերի պատմական հիշողության հիմքը, հետագայում դարձել են հայ պատմափիլիսոփայական հայեցակարգերի առանցքը: Տեր-Մինասյանը XX դ. առաջին կեսի հայ աշխարհաքաղաքական դպրոցի հիմնադիրներից մեկն է, հայ ազգային աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական հայեցակարգի հեղինակ: «Միացեալ և անկախ Հայաստան» գաղափարադրույթի հենքի վրա կառուցվող Ռուբենի աշխարհաքաղաքական / աշխարհառազմավարական հայեցակարգը բնութագրելի է որպես նրա պատմափիլիսոփայական աշխարհայացքի մեթոդաբանական հիմք:

Մինաս Տեր-Մինասյանի աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական հայեցակարգին բնորոշ է տարածական մոտեցումը մեր տարածաշրջանում (Հարավային Կովկասում) ստեղծված քաղաքական իրավիճակի նկատմամբ և այդ համատեքստում հայ ազգի գոյության ու զարգացման համար անհրաժեշտ միջոցների սահմանումը՝ հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական միջավայրի ռազմավարական հատկությունները: Այս իմաստով նրա մոտեցումը համահարաբերական է աշխարհաքաղաքականության նախահայր՝ Ղևոնդ Ալիշանի աշխարհաքաղաքական / աշխարհառազմավարական հայեցակարգին [3]:

Մտածողի ուշադրության կենտրոնում է հայ ազգի կենսական տարածության հիմնահարցը, որի ապահովման կարևորագույն կառուցակարգը նա համարում է հայկական նոր պետությունը: 100 տարի անց այս հրամայականը ոչ միայն չի կորցրել իր արդիականությունը, այլև վերածնվել է իբրև աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական ճակատագրական հիմնախնդիր ամբողջ հայ ազգի և հայ ազ-

---

[2] Տե՛ս **Ռ. Միրումյան,** Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIXդ. հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանա կան տեսանկյուններ, Երևան, 2003, էջ 50: Տե՛ս նաև նույնի՝ Սեն Արևշատյանի պատմափիլիսոփայակսն հայեցակարգի մեթոդաբանական:

[3] Հմմտ.՝ **Հ. Ղեւոնդ մարգ. Ալիշանեան,** Քաղաքական աշխարհագրություն, Ի Վենետիկ, 1853:

գային պետականության, ինչպես նաև Հարավային Կովկասի և ողջ Մերձավոր Արևելքի համար, քանզի Հայաստանը Մեծ Մերձավոր Արևելքի հյուսիսային դարպասն է: Առավել ցցուն ձևով այդ հանգամանքը արտահայտվել է Արցախյան 44-օրյա պատերազմի (սեպտեմբեր-նոյեմբեր 2020թ.) ընթացքում և դրանից հետո:

Ներկայացվող հոդվածում իմաստավորվում է Հայաստան աշխարհի (հայ ազգի ձևավորման ու զարգացման բնօրրանի, նրա լինելիության ու ստեղծագործության տարածության) մտածողի բնութագրումը: Հայագիտության մեջ այս խնդիրը առաջին անգամ է դառնում հատուկ ուսումնասիրության առարկա:

Հայաստան աշխարհի (մտածողի եզրութաբանությամբ՝ "Երկրի" կամ «Միացեալ և Անկախ Հայաստանի») գաղափարը ծնունդ է առել XX դ. 20-ական թվականներին հայ իրականության մեջ ստեղծված իրավիճակով, այն է՝ Տաճկահայաստանի ավերմամբ ու Սովետական Հայաստանի առաջացմամբ: Տեր-Մինասյանը մերժում է հայ քաղաքական մտքի, ազգային գաղափարախոսների կարգախոսների, ինչպես նաև ազգի առաջնորդների կողմնորոշումների մեջ առաջացած երկու իրարամերժ միտումները.1. «Երկիր» ասելով նախկինում նկատի ունեին տաճկահայ վիլայեթները: 2. Այսօր Հայաստան ասելով նկատի ունեն Արարատյան աշխարհը՝ մոռանայով Տաճկահայաստանը: Այդ երկու միտումներից ավելի վտանգավոր է համարվում երկրորդը. «Թուլամորթ և նեղմիտ Հայերու որոշ հոսանքներ այսօր կը ծաղրեն տաճկահայկական նահանգներու ազատագրումը, զայն համարելով հայկական «իմպերիալիզմ» կամ անյոյս բախտախնդրութիւն մը, որմէ կրնայ վնասուիլ ներկայ Հայաստանը, այսինքն Արարատեան աշխարհը: Այդ հոգեբանութիւնը աւելի վտանգաւոր և մահացու է Հայաստանի և հայ ժողովուրդին համար, քան Թալեաթի հարվածը... Պէտկ է բոլորն ալ ըմբռնեն, որ «Հայաստան» անունը չի կրնար կրեն ո՛չ Վասպուրականը առանձին առնուած, ո՛չ Տարօնը, ո՛չ Բարձր Հայքը և ոչ ալ այսօրուայ կիսազատ Հայաստանը, որ խորհրդային կը կոչուի: Հայաստանը մէկ անբաժանելի ամբողջութիւն է Տաւրոսի գլուխէն մինչև Ղարաբախ»[4]:

---

[4] Մինաս Տեր-Մինասեան, Միացեալ Հայաստան/ Ռուբեն Տեր-Մինասեան (Յոդվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 117-118: Այս հոդվածը առաջին անղամ տպագրվել է "Դրօշակ" հանդեսում (1926թ., n7, էջ 208-214):

Ըստ էության՝ Տեր-Մինասյանը հռչակում է «Միացեալ և Անկախ Հայաստան» գաղափարը, որն էլ դիտելի է որպես նրա աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական հայեցակարգի հիմքն ու առանցքը: Որպես հիմնավորում ծառայում է մտածողի հետևյալ բանաձևը. «Ասկէ պէտկ է եզրակացնել թէ այդ յամառ ձգտումը (Միացյալ Հայաստանի պահանջը. - Ռ.Մ.) ոչ յախուռն զգացումի հետեւանք չէ և ոչ ալ պատահականութեան...այդ անհաշտ ընթացքը կը բղխի հայ ժողովորդի և Հայաստանի գոյութեան և շահերու յստակ գիտանցութենէն... Չիք փրկութիւն հայ ժողովրդի առանց Հայաստանի, չկայ Հայաստան առանց միացեալի, չկայ ազատութիւն առանց սեփական ուժի և երկրի ապահովութեան»[5]: «Միացեալ Հայաստան» նշանաբանի ընտրությունը նա բացատրում է հետևյալ կերպ: Հայաստանը չի կարող գոյութիւն ունենալ՝ ոչ սահմանափակվելով Արարատյան երկրով և ոչ էլ Տաճկահայաստանով, քանզի թե մեկի, թե մյուսի պատահական անկախությունը ժամանակավոր հանգրվան է, «հասնելու համար իսկական Հայաստանի ստեծմանը, որ պիտի իրականանայ բռնակալներու գծած սահմաններու ջնջումով»: Միաժամանակ, «Միացեալ Հայաստանի» գաղափարը որոշակիորեն ճշգրտում է Հայաստանի դերակատարությունը տարածաշրջանում և մոտավոր սահմանները՝ Արարատի շուրջը ամփոփված և Ռուսաստանի ու Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական նահանգները: Անհիշատակ ժամանակներից ի վեր այդ նահանգները եղել են հայ ժողովրդի «ծննդավայրը, իշխանութեան և ուժի բնագավառը»: Մտածողն առանձնացնում է հայ ազգի բնօրրանը՝ Մայր Հայաստանը և Մայր Հայաստանից սերած իշխանությունները (Ռուբինյաց իշխանություն): Ընդ որում Մայր Հայաստանը «կը տարածուի հայկական Փոքր Կովկասէն մինչև հայկական Տաւրոս, երբեմն լեցուեր է խիտ հայութեամբ և դուրս ելլելով իր ափերէն, տարածուեր է մինչև Տիգրանակերտ, Մծբնի դռները և այլ հեռավոր երկիրներ: Բայց այս նոր աշխարհները Հայաստանի փառքի եւ մեծութեան մասերն են եղած, և ոչ թէ անոր էութեան և կեանքին հիմքերը, կամ հայութեան բուն օրրանը»[6]:

Միաժամանակ, Ռուբենը տարանջատում է Հայոց պատմությունը և Հայաստանի պատմությունը՝ առաջնությունը տալով Հայաստանի

[5] Նուն տեղում, էջ 118:

[6] Նույն տեղում, էջ 119:

պատմությանը, խուսափելու համար ծայրահեղություններից և անհեթեթություններից: Այսպես, օրինակ, «Հաշտութեան վեհաժողովին երկու պատւիրակութիւններու կողմէ ներկայացուած յիշատակագիրը իր մէջ կը պարփակէր ոչ միայն ամբողջ Մայր Հայաստանը, այլ եւ Տիգրան Մեծի կայսրութիւնը եւ անոր փեսայ Կապատովկիոյ - Միհրդատի կալուածներու մէկ մասը: Այս ծրագրին կուսակիցները նկատի չեն առած հայ ժողովուրդին ֆիզիքական կարողութիւնը, մեր հարեւան ժողովուրդներու կենսական շահերը, աշխարհագրական, տնտեսական եւ այլ պայմանները, այլ լոկ Հայ ազգի պատմութիւնը»[7]: Տեր-Մինասյանը հաստատում է, որ այժմ պետկ է բավարարվել Մայր Հայաստանի տարածքով: Նույն պատճառաբանությամբ նա մերժում է նաև դաշնակից պետությունների կողմից առաջ քաշած «Հօմ»-ը - Հայկական օջախի (ըստ էության՝ հայկական գաղութի) գաղափարը: Մտածողի համոզմամբ այդ գաղութը անհրաժեշտորեն հանգեցնելու է թե ներկա, թե ապագա Հայաստանի «կորովի ու թափի» ջլատմանը: Հետևապես, հայ ժողովրդի միտքն ու հոգին պետկ է «սեւեռած պահել միայն դէպի մէկ նպատակ - դէպի Հայաստան, դէպի մեր երկիրը, ուր կը գտնուի և՛ մեր «օջախը» և՛ մեր արմատն ու հիմքը... Այսօր մեր ձեռքն չէ Մայր Հայաստանը ամբողջապէս, բայց մեր ձերքն է անոր մէկ բեկորը, մէկ միլիոն ժողովուրդով: Բոլոր Հայերը... պիտի ըմբռնեն, որ ներկայ Հայաստանն է մեր հայրենիքը, մեր բաղձացած Հայաստանի թանկարժէք կորիզը[8]: Այս համատեքստում Ռուբենը ողջունում է իր կողմից ապազգային հոսանք որակվող հայ բոլշևիկներին, ըստ որոնց՝ Հայաստանը պետք է ստեղծվի հայկական բարձրավանդակի վրա: Միաժամանակ նա մերժում է որոշ հայ բոլշևիկների կողմից որդեգրած այն թեզը, թե հնարավոր է Հայաստան ստեղծել՝ սահմանափակվելով Արարատյան աշխարհով: Ռուբենի համոզմամբ Հայաստանի ստեղծումը անհրաժեշտորեն ենթադրում է Նախիջևանի, Սյունիքի, Արցախի, Ջավախքի միացումը Արարատյան աշխարհին:

«Դրօշակ» պարբերականի համարներում (սկսած 1925թ.) տպագրված հոդվածներում Տեր-Մինասյանը պարզաբանում է, թե աշխարհագրական որ կետերը պետք է կազմեն Հայաստանի հյուսիսային սահմանները: Գավառ առ գավառ ներկայացնելով, նա ներկայացրել է

[7] Նույն տեղում, էջ 119 - 120:

[8] Նույն տեղում, էջ 121:

հայ ազգի կենսական այն շահերը, որոնց իրագործումը ենթադրում է Վրաստանի և Ադրբեջանի բռնագրաված տարածքների ազատագրումը: Մյուս կողմից, նա ընդգծում է, որ Անդրկովկասյան Հայաստանի սահմանների ճշգրտման հարցից բացի, հարկ է լուծել նաև Տաճկահայաստանի նահանգների հարցը: Թուրքիային դաշնակից դարձած Սովետական Միութիւնը փակված է համարում հայկական հարցը Թուրքիայում: Բոլշևիկները Կարսի և Մոսկվայի դաշնագրերով, Ախուրյանի և Արաքսի ափերով «սահմանային շղթաներ քաշած են Հայաստանի մարմնին վրայ: Խորհրդային իշխանութիւնը, մեջն ըլլալով և հայ բոլշևիկները, առանց ամօթի կը յայտարարեն ի լուր աշխարհի, թէ հայերը որ և է իրաւունք չունին հայկական նահանգներու մասին, և թէ աշխարհակալութիւն ու կորստաբեր անմտութիւն է հայ ժողովրդի բաղձանքը՝ ազատագրուած տեսնել Տաճկահայկական նահանգները քեմալական լուծէն և անոր միացուած՝ Արարատեան նահանգը եւ Արցախը»[9]:

«Միացեալ Հայաստանի» ծրագիրը Ռուբենը բխեցնում է հետևյալ պատճառներից:

1. Հայ ժողովրդի և Հայաստանի պատմությունից:
2. Հայկական հեղափոխական շարժման հետևողական ընթացքից:
3. Հայ ժողովրդի և սերունդների անապաստան, հայրենազուրկ վիճակից:
4. Ներկա Հայաստանի ապահովության պահանջից:
5. Հայաստանի աշխարհագրական և տնտեսական ամբողջություն կազմելու ձգտումից:
6. Առաջավոր Ասիայի մեջ խաղաղությունը վերջնականապես հաստատելու ու քաղաքական խաղերին վերջ տալու պահանջից:

Տեր-Մինասյանի հաստատմամբ Տաճկահայ նահանգները կազմում են Հայաստանի էությունը: Հին ժամանակներից առ այսօր ոչ միայն հայերը, այնպես էլ օտարները (գիտնականները, ճանապարհորդներն ու քարտեզագիրները) Տավրոսյան լեռնաշղթան անվանում են հայկական Տավրոս, իսկ այդտեղից մինչև Փոքր Կովկաս երկարող

[9] Նույն տեղում, էջ 122:

երկիրը «անվանում են Հայաստան.»: Իրապէս ալ բոլորը կը խոստովանին, թէ այդ երկիրը հայունն է եղած և պիտի ըլլայ հայրենիք դեռ ևս ապրող և իր իրաւունքները ճանչցող հայ ժողովուրդին համար... երբ Տաճկահայկական նահանգները աւերակ և անմարդաբնակ էին դարձած, ոչ միայն դաշնակից պետութիւնները և արար աշխարհը կը խոստովանէ հայ ժողովուրդի պատմական իրաւունքները այդ նահանգների մասին, այլ նոյնիսկ Պոլսոյ թուրք իշխանութիւնը, նոյնիսկ հանգուցեալ Ս.Շահումյանը և Լենինը. վերջիններս 1917-ին յատուկ դեկրետով Տաճկահայ վիլայէթները կը հայտարարեն անիրաւօրեն բռնագրաւուած աշխարհակալ Թուրքերու և Ռուսներու կողմէ և կը հռչակէն «Միացեալ և Անկախ Հայաստանը»[10]: Մտածողի այս դատողության արդարացիության մասին վկայում են բազմաթիվ հին և նոր ուսումնասիրություններ, որոնցից հարկ եմ համարում նշել XIXդ. ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուայի հեղինակած «Ճանապարհորդություն դեպի Կիլիկիա և Տավրոսի լեռների» (1861թ.) ուսումնասիրությունը:

Նշված հանգամանքի կարևորությունը Ռուբենը պայմանավորում է նրանով, որ ժողովրդի պատմությունը «մտացածին հեքիաթ չէ, այլ կենդանի կապը իր հայրենիքի քարին եւ հողին, ջուրին եւ ծովին: Երկրի մը պատմութիւնը կը նույնանայ ժողովրդի ներկայ ու ապագայ կեանքին հետ»: Միացեալ Հայաստանի դատը հետապնդող հայերը, նշանակետ «բռնելով Վասպուրական մը, Տարօն մը», գիտեն, որ դրանով ոչ թէ անշունչ քարերի են ձտտում, այլ «շնչաւոր հայ ժողովուրդին ամբողջութեանը, որ անտեսանելի թելերով կապուած է այդ լեռներու ու դաշտերու հետ»[11]: Ուստի պատահական չի թվում այն հանգամանքը, որ հայ ազատագրական շարժումները մտածողը համարում է Հայաստանի պատմության «հետեւողական շարունակութիւնը»: Ռուբենի պնդմամբ «հայ յեղափոխութեան մտքի և գործի առանցքն են եղել Վասպուրականը, Տարօնը, Բարձր Հայքն ու Կարսը»: Դա համարվում

[10] Նույն տեղում, էջ 123:
[11] Նույն տեղում, էջ 124:

է հայ ժողովրդի բնական ձգտումը, քանզի սկզբից ի վեր այդ երկրամասերը՝ Արարատյան և Սյունյաց աշխարհների հետ միասին, եղել են հայ ժողովիդի օրրանը և նրա անցյալի ու ապագայի հիմքը: Այդ երկրամասերից հրաժարվելը պատմական հեռանկարում կհանգեցնի հայ ժողովրդի անհետացմանը:

Պատասխանելով իր ընդդիմախոսներին, որոնք մերժում են հանուն Տաճկահայաստանի ազատագրման հայության պայքարի անհրաժեշտությունը այն պատճառաբանությամբ, որ ցեղասպանությունից հետո Տաճկահայաստանում հայ չի մնացել, Ռուբենը հաստատում է, որ ժողովուրդները, ինչպես և անհատները, ձգտում են ապահովել ոչ միայն իրենց ներկան, այլև իրենց ապագան՝ իրենց զավակների, թոռների և թոռան-թոռների կյանքը: Հանուն այդ ապագայի նահատակվեց ազգի մի մասը: Նույն ապագայի համար ազգի մյուս մասը պետք է ապրի ու պայքարի: Տեր-Մինասյանը խնդիրը հանգեցնում է ազգային ինքնության պահպանմանը՝ հայը կարող է պահպանվել իր ստեղծագործ ուժը, այն է՝ պահպանվել որպես ազգ միմիայն իր պատմական հայրենիքում. «... այսօր Վասպուրականի, Բարձր Հայքի, Տարօնի եւ միւս գաւառներուն մէջ հայ չկայ, բայց պէտկ չէ մոռնալ, որ հոն թուրք ալ չկայ... Երբ մէկ կողմէ Հայաստանը դատարկ է եւ միւս կողմէ հայ ժողովուրդը դեռ գոյութիւն ունի, երբ անոր թափառական բազմութիւնները լեցուած ազատութեան եւ հայրենաբաղձութեան բուռն տենչերով իրենց պապենական օջախները կ' երազեն՝ դեռ շատ վաղաժամ է ըսել, թէ կորած է ամէն ինչ: Տաճկահայ վիլայեթներու խնդիրը չի կրնար փակուիլ ո'չ Լօզանի, ոչ՛- Մոսկուայի եւ ո'չ ալ Կարսի խայտառակ դաշինքներով»[12]: Տեր-Մինասյանը չի ընդունում նաև այն տեսակետը, ըստ որի՝ պետք է բավարարվել Սովետական Հայաստանի տարածքով ու մոռանալ Միացեալ Հայաստանի գաղափարը: Սակայն անգամ այս գաղափարը մերժող 1925թ. բոլշևիկների պաշտոնական տվյալներով Հայաստանի փոքր տարածքը հնարավորություն

[12] Նույն տեղում, էջ125:

չի տալիս անհրաժեշտ չափով զարգացնել տնտեսությունը ու անգամ գյուղատնտեսությունը՝ ժողովրդի բնականոն կյանքը ապահովելու համար: Մինչդեռ «լուրջ կուսակցութիւն մը, կամ կառավարութիւն մը,..պարտական է մտածել ոչ միայն այսօր Հայաստանի մէջ գտնուող Հայերու մասին, այլև ունենալ մտահոգութիւն՝ իրեն յանձնուած ժողովուրդի ապագան ապահովելու առնուազն քանի մը տասնեակ տարիներ… կա՞ արդեօք բավա-կանաչափ հող Հայաստան անունը կրող Արարատեան երկրին մէջ: Պատասխանը բացասական է: Հայ ժողովուրդը հողազուրկ է նոյնիսկ բոլշևիկների վկայությամբ… հայ ժողովուրդը կը նուազի՞ թէ կաճի այդ նեղլիկ Հայաստանի մէջ: Պատասխանը դրական է նոյն ինքն խորհրդային տեղեկութեանց համաձայն»[13]: Մյուս կողմից, Հայաստանից դուրս ապրող հայերը նույնպես իրավունք ունեն հանախմբվել իրենց պատմական հայրենիքում: Դա իրականություն կդառնա միայն «Միացեալ Հայաստանի» ստեղծման արդյունքում: Ավելին, «Միացեալ Հայաստանի» ստեղծումն անհրաժեշտ է անգամ Հայաստանի ապահովության համար: Նշվածից հետևում է, որ միայն «Միացեալ և Անկախ Հայաստանի», ողջ հայության այդ «ամբողջական տան» մեջ հայ ժողովուրդը կարող է իրեն ապահով զգալ. «Մեր ապահովութիւնը և ապրելու գրաւականներն են միայն Հայաստանի ամուր լեռները, իրենց բնական սահնաններով և հայ ժողովրդի ոյժն ու կորովը: Անոնք ապավինելէ յետոյ միայն կարելի է փոխադարձաբար բարեկամ ըլլալ և հաւատալ ռուսին ու թուրքին ալ: Իսկ եթէ հակառակը պնդողներ կան, անոնք այն միամիտներն են, որոնք վաղ թէ ուշ պիտի առաջնորդուին դէպի սպանդանոց…»[14]:

Այսպիսով, Մինաս Տեր-Մինասյանը ձևակերպել է աշխարհագրական ու պատմական հիմք ունեցող ազգային ռազմավարություն, որը սերտաճած է հայ ազգային աշխարհաքաղաքական / աշխարհառազմավարական ավանդույթի մեջ ու նպատակամիտված է ապահովելու Հայաստանի ու հայ ազգի անվտանգությունն ու բարգավաճումը:

[13] Նույն տեղում, էջ 128:
[14] Նույն տեղում, էջ 129:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ձևակերպվում և հիմնավորվում է այն գաղափարը, ըստ որի՝ XX դարի առաջին կեսի հայ ազգային գաղափարախոս Մինաս Տեր-Մինասյանի (Ռուբենի) աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական հայեցակարգի հիմքն ու առանցքը կազմում է «Միացեալ և Անկախ Հայաստանի» հիմնադրույթը: Հայ ազգի լինելիության ու բարգավաճման գրավականը հայ քաղաքական մտածողը համարում է հայկական նոր պետության ստեղծումը հայության պատմական տարածքի սահմաններում: Միայն այդ դեպքում է հնարավոր հայ ազգի իրավունքի կենսագործումն ու Հարավային Կովկասում հարատև խաղաղության ապահովումը: Ըստ էության՝ Մինաս Տեր-Մինասյանի աշխարհաքաղաքական / աշխարհառազմավարական հայեցակարգը աշխարհագրական և պատմական հիմք ունեցող ազգային ռազմավարություն է, որի կիրառմամբ կարելի է ապահովել ինչպես հայ ազգի ներկան, այնպես էլ նրա ապագան:

Բանալի բառեր. ազգային պետականություն, Մինաս Տեր-Մինասյան, աշխարհաքաղաքական / աշխարհառազմավարական հայեցակարգ, միացյալ և ազատ Հայաստան, ազգային ռազմավարություն, ազգի իրավունք, պատմական հայրենիք:

ГЕОПОЛИТИЧЕСКОЕ / ГЕОСТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИДЕОЛОГЕМЫ "ОБЪЕДИНЁННАЯ И СВОБОДНАЯ АРМЕНИЯ" В ФИЛОСОФСКО-ИСТОРИЧЕСКОМ МИРОВОЗЗРЕНИИ МИНАСА ТЕР-МИНАСЯНА

Мирумян Римма

Доктор философских наук, профессор

Ведующий научнтый сотрудник Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье формулируется и обосновывается идея о том, что основой и стержнем геополитической/геостратегической концепции армянского национального идеолога первой половины XX века Минаса Тер -Минасяна (Рубена) является идеологема "Объединённая и свободная

Армения". Гарантией существования и процветания нации армянский политический мыслитель считает создание нового армянского государства в исторических границах армянства. Лишь в этом случае возможна реализация права армянской нации и обеспечение долгого мира на Южном Кавказе. По существу, геополитическая / геостратегическая концепция Минаса Тер-Минасяна является имеющей географическую и историческую основу национальной стратегией, при применении которой возможно обеспечение как настоящего, так и будущего армянской нации.

Ключевые слова: национальное государство, Минас Тер – Минасян, геополитическая / геостратегическая концепция, объединённая и свободная Армения, национальная стратегия, право нации, историческая родина.

GEOPOLITICAL / GEOSTRATEGIC SIGNIFICANCE AND IDEOLOGEMES OF A UNITED FREE ARMENIA IN THE PHILOSOPHICAL AND HISTORICAL WORLDVIEW OF MINAS TER-MINASYAN.

Mirumyan Rima

Doctor of Philosophical Sciences, Professor
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law NAS RA

SUMMARY

The article formulates and substantiates the idea that the basis and core of the geopolitical / geostrategic concept of the Armenian national ideologist of the 1st half of the 20th century Minas Ter-Minasyan (Ruben) is the ideologeme «United and free Armenia». The guarantee of the existence and prosperity of the nation is the Armenian political thinker considers the creation of a new Armenian state in the historical borders of Armeniancy. Only in this case it is possible to realize the right of the Ar-

menian nation and ensure long-term peace in the South Caucasus. In essence, the geopolitical / geostrategic concept of Minas Ter-Minasyan is a national strategy that has a geographic and historical basis, the application of which can ensure both the present and the future of the Armenian nation.

Key words: nation state, Minas Ter-Minasyan, geopolitical/geostrategic concept, united and free Armenia, national strategy, right of the nation, historical homeland.